# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ
ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016/108
*10 ապրիլ 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 35-Ա, 36-Ա, 37-Ա, 38-Ա և 39-Ա որոշումները:

Առդիր՝ 5 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

09 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 35-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, և 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Բազում համայնքի հարազատին կորցրած անձ Ռադիկ Ռուբենի Հարությունյանին մոր՝ Լենիկ Գրիգորի Հարությունյանի հուղարկավորության հետ կապված ծախսերը հոգալու նպատակով տրամադրել սոցիալական օգնություն՝ 30000 /երեսուն հազար/ դրամի չափով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 36-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, և 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Բազում համայնքի հարազատին կորցրած անձ Մացակ Գալուստի Մնացականյանին հոր՝ Գալուստ Գրիշայի Մնացականյանի հուղարկավորության հետ կապված ծախսերը հոգալու նպատակով տրամադրել սոցիալական օգնություն՝ 30000 /երեսուն հազար/ դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 37-Ա

### ՆՈՐԱՅՐ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-023-0234-0055 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00712 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին >> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով Նորայր Սիրեկանյանի համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով գնելու, ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի համայնքային սեփականություն ճանաչված, Նորայր Սիրեկանյանի կողմից ինքնակամ կառուցված 9-րդ փողոցի թիվ 18 փոստային հասցեով ավտոտնակը և զբաղեցրած հողամասը, և, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պահանջներին և ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության Բազում համայնքի Համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված /անշարժ գույքի գրանցման թիվ 13032018-0045 վկայական/ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող , Նորայր Բաղդասարի Սիրեկանյանի կողմից ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի 9-րդ փողոց թիվ 18 փոստային հասցեով համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0234-0055 ծածկագրով 0.00712 հա ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող հողամասը, կադաստրային արժեքով ՝ 15807/տասնհինգ հազար ութ հարյուր յոթ/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 222 ՀՀ դրամով և արտաքին չափերով ինքնակամ կառուցված 37.4 քմ մակերեսով ավտոտնակը 20570 /քսան հազար հինգ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 550 ՀՀ դրամով գնման նախատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել Նորայր Բաղդասարի Սիրեկանյանին:

2. Պարտավորեցնել Նորայր Սիրեկանյանին 30-օրյա ժամկետում համայնքի ֆոնդային հաշվին վճարել 36377 ՀՀ դրամ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի օտարման արժեքը և կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

3.Անշարժ գույքի պետական գրանցման հետ կապված ծախսերը իրականացնել Նորայր Սիրեկանյանի հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 38-Ա

0.08017 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 458-Ն որոշումը և ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 43-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 08.04.2004 թ-ի թիվ 458-Ն որոշմամբ Բազում համայնքի 06-023-0236-0006 ծածկագրի տակ գտնվող հողամասը՝ գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողը գտնվում է Բազում գյուղական համայնքին անհատույց փոխանցվող հողամասերի ցանկում, ճանաչել, 06-023-0236-0006 ծածկագրի տակ գտնվող 0.08017 հա հողամասի նկատմամբ Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանմանը համայնքային հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 39-Ա

### 0.06992 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 458-Ն որոշումը և ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 43-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 08.04.2004 թ-ի թիվ 458-Ն որոշմամբ Բազում համայնքի 06-023-0236-0005 ծածկագրի տակ գտնվող հողամասը՝ գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողը գտնվում է Բազում գյուղական համայնքին անհատույց փոխանցվող հողամասերի ցանկում, ճանաչել, 06-023-0236-0005 ծածկագրի տակ գտնվող 0.06992հա հողամասի նկատմամբ Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանմանը համայնքային հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ